ՍԱԹԵՆԻԿ ԱՒԵՏԻՍԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԽԱՐԻՍԽԸ ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վնասուած էութեամբ գրողների մի քանի սերունդ դուրս եկաւ Մեծ Եղեռնի դժոխքից։ Նրանք ստիպուած էին ապրել ամենատարբեր իրականութիւններում, որոնք վտանգում էին հայի նրանց ինքնութիւնը՝ ուղղակի ոչնչացումից մինչեւ լիակատար ինքնալուծարք եւ ուծացում։ Ցաւալիօրէն ամենադաժան ճակատագիրն էր սահմանուած նրանց, ովքեր հաստատուեցին Հայաստանում. նրանք կրկնակի եղեռն ապրեցին՝ 1915-ը եւ 1937-ը։ Գ. Մահարին, Եղ. Չարենցը, Վ. Թոթովենցը, Զ. Եսայեանը կրկնակի մահ ունեցան՝ բնօրրանի եւ սեփական անձի, հայութեան եւ մշակութաստեղծ ինքնութեան։ Նրանք, ովքեր ցեղասպանութեան շրջանում ձեւաւորուած մշակութային ինքնութիւն ունէին, շարունակեցին ստեղծագործել՝ իրենց գեղարուեստական համակարգի առանցքում ունենալով կորուսեալ հայրենիքը, գրով այն պահպանելու եւ սեփական եսը փրկելու գերագոյն ճիգը (Շահնուր, Համաստեղ, Մնձուրի, Օշական, Թէքէյեան եւ միւսներ)։

Ֆիզիկական փրկութիւն՝ առաւելագոյն կորուստներով. անդառնալիօրէն խլուած էին հայրենիքը, ընտանիքը, բոյնն աւերուած էր, իսկ բնաւէր ու տնաւեր եսը անարմատ գոյութիւն է, վթարուած ինքնութեամբ մէկը, ցաւի մղկտոցը թաքուն կրելու պարտադրանքի գերին. «Ես ինչ գործ ունէի այս քաղաքը։ Դէպքերը զիս հոս հաստատեցին։ Ինծի մնայ՝ ես չէի բաժնուէր մեր բարձրաւանդակէն, մեր քնարական գետափերէն։ ԵՍ ՊԱՏԱՆԴ ՄԸՆ ԵՄ ու պատանդ ըլլալով հանդերձ դատապարտուած եմ հոս ապրելու»[1],— գրում էր Յ. Մնձուրին։ Ահա այսպէս՝ պատանդի դատապարտուածութեամբ, իր խորունկ ցաւը գրի էր վերածում անտուն ու անհայրենիք, որբանոցներում հասակ առնող հայ գրողների մի մեծ խումբ, որ Հայաստանում եւ գաղթավայրերում ազգային մշակոյթն էր բարձրացնելու՝ հայապահպանութեան ու ազգային

[1] Յակոբ Մնջուրի, *Տեղեր ուր ես եղեր եմ*, Իսթանպուլ, 1984, էջ 189։

պետականութեան կայացման հիմնախնդիրը դարձնելով գրականութեան եւ կեցութեան բովանդակութիւնը։

Ո՞րն է նրանց ստեղծագործ ջիղը սնուցող ակունքը. բազմաթիւ են մշակութաստեղծ անհատի ոգեղէն կենսաուժի հաղորդիչները։ Առաջնային-հիմնայինը հայ ինքնութիւնը բաղադրող ծրագիրն է՝ ԴՆԹ-ն, ինքնութեան յարացոյցը, որից յորդում է աստուածային միտքը, ինչպէս առատութեան եղջիւրից՝ գոյաւորելով տիեզերական բանից ածանցուած նիւթի բազմակերպութիւնն ու տարասեռութիւնը։ Միտքը նիւթաւորող նախնական մակարդակը բառն է, որ մտքի հզօրութեան դէպքում պատկերաւորում է՝ հնչիւնների անսահման համադրութիւններով արտայայտելով կենսաուժի բարձր յաճախականութիւններից կերպաւորուող գաղափարը։ Եռաչափ գոյաբանական աշխարհի զգայական ընկալման սահմանները տարբեր են՝ դարձեալ կապուած մտքի յաճախականութիւնների հետ, բայց մի բան անվերապահ ճշմարտութիւն է. ինքնութեան խարիսխն անհատին ծնունդ տուող կենսամիջավայրն է՝ կենսաուժով շաղախուած օդի, ջրի, հողի եւ կրակի համաձուլուածքից բաղադրուած տարածքը, որ հայրենիք է կոչուել։ Արարող մարդկանց այս աստուածային բնօրրանը խլուել է հակաաստուածային արհեստածին գոյերի կողմից՝ հայ ինքնութեան խարիսխը փոխադրելով օտար կենսամիջավայր, որն աղաւաղելու էր նախաստեղծ աստուածային կառոյցը։ Միտքը խթանող ցաւը, որ հայրենիքի կորուստն էր, ինքն իր ներսում ստեղծելու էր պատկերը՝ այն ցանկալի իրականութեան, որ այլեւս չկար եւ որ ըմբոստ հակադրութեան էր գնում անհարազատ միջավայրի հետ։

Մուշեղ Իշխան. ամենահայ գաղթավայրերից մէկի՝ Բէյրութի ոգեղէն սիւներից, մշակութային անընդգրկելի կենսոլորտ արարող հայ, որի ինքնութիւնը բաղադրուած էր ոգեղէն բազում շնորհներից՝ բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, մանկավարժ, քննադատ, հրապարակագիր։ Ինչպէս նկատում է գրականագէտ Վազգէն Գաբրիելեանը[2]*, նա եկաւ շարունակելու հայ նոր եւ նորագոյն բանաստեղծների՝ Իսահակեանի, Տէրեանի, Սիամանթոյի, Չարենցի աւանդները, մասնաւորապէս Դանիէլ Վարուժանի գեղագիտական համակարգին ներյատուկ բանարուեստի եւ թեմայի միասնութեամբ կերտուած բանաստեղծական շարքերի՝ երգերի աւանդոյթը։ Ընդհատուած «Հացին երգի» եւ չգրուած «Գինու երգի» փոխարէն, որ պէտք է լինէին արարչագործ հայորդու*

[2] Մուշեղ Իշխան, *Երկեր, Երեւան, 1990, էջ 8։*

միքանիհազարամեայ մշակոյթի փառաբանումը, ծնուեց «Տուներու երգը»՝ անհաց ու տնանկ որբի կարօտների երգը։

Կենսապատումը «տղու մը որբ» ոչ միայն Անդրանիկ Ծառուկեանի, Ժագ Յակոբեանի, Վահէ Վահեանի կամ Մուշեղ Իշխանի, այլեւ արեւմտահայ մի ողջ սերնդի պարտադրուած ճակատագիրն էր, պարզապէս նրանց էր տրուած ցաւը բանաստեղծութեան վերածելու շնորհը։ Տարիների հետ գուցէ մեղմուել էր կորստի տառապանքը, բայց հոգու եւ մտքի մի թաքուն անկիւնում այն բաց նեարդ էր, որ միշտ նւում էր տառապանքից.

Զէ՞ֆ ճանչնար զիս, ես այն մանչուկն եմ սիրուն,
Որ յոգնասպառ, կիսամերկ,
Անապատին մէջ Տէր Զօրի մտաւ ֆուն
Եւ շարթնցաւ ալ երբեմ։

Մի՛ սարսափէֆ կմախակերպ իմ տեսքէս,
Հող չեմ մտած ես բնաւ,
Կը շրջէի դիակներու մէջ այսպէ՛ս
Միշտ անօթի ու ծարաւ[3]…

Այս հատուածը՝ «Յիշեցէ՛ք զիս» բանաստեղծութիւնից՝ ընդգրկուած 1968-ին լոյս տեսած «Տառապանք» ժողովածուի մէջ, վկայում է, որ տասնամեակները չէին կարողացել ջնջել արիւնոտ զգացողութիւնները, որ վերադարձը դէպի գոյաւորման մաքրամաքուր սկիզբ, դէպի մանկան համար ամենատաքուկ, պաշտպանուած տարածք, որ մայրական գիրկն է, արթուն է եղել անգամ հասուն տղամարդու հոգեւոր պահանջմունքներում։ Բայց մահուան անապատներով անցած, սիրելիներին կորցրած մայրն արդէն հոգու առողջութիւնից զրկուած մէկն է, որ, վերջին զաւակին զոհ տալով, գետի յորձանքին է յանձնում իր մարմինը.

Ո՞ւր է հիմա, ո՞ր աստղին տակ կ՚ապրի ան.
Ա՜հ, կ՚աղօթէ՞ ինձ համար…
Յո՛յց տուէ՛ ինձ խորհրդաւոր իր ճամփան
Մայր եմ յաւէտ խելագար[4]…

---

[3] Մուշեղ Իշխան, *Երկեր, Երեւան, 1990, էջ 211։*
[4] *Անդ։*

Ինքնութեան ամրացման առաջին աստիճանը, որ մայրն է, կորցրել է բանականութիւնը՝ վերացնելով կամ թուլացնելով զաւակների վերադարձի հնարաւորութիւնը դէպի սկիզբ։ Որբութեան ցաւի օղակը թողնելով բաց՝ վերադառնանք 1936-ին լոյս տեսած առաջին ժողովածուին՝ «Տուներու երգին»՝ քննելու արմատից կտրուած մշակութային հայի ինքնորոնման ճիգը։ Գաղափարով եւ թեմայով միասնական համակարգ ներկայացնող այս շարքն ունի ամուր գեղարուեստական առանցք, որ տան խորհրդապատկերն է՝ մարդկային կացարանի բոլոր մեծ ու փոքր տարբերակներով։ Մուշեղ Իշխանը մէկ տարեկան էր, որ մօր գրկին անցնում էր դժոխքի պարունակներով. նշանակում է՝ հայրենական տունը՝ որպէս առարկայական պատկեր ու ապրում, չկար նրա մտակառոյցում, եւ «կթափառիմ հոս անտուն» բանաձեւումը տան տեսիլի բազմակերպութեան ակունքն է։ «Ի խորոց սրտի զրոյցն Աստծոյ հետ» դառնում է հայ բանաստեղծութեան հանգանակը, եւ մեծարենցեան «Տո՛ւր ինծի, Տէ՛ր»-ի անանձնականութեանը, որ յայտնի չէ՝ 1915-ի սահմանը հատելու դէպքում այլասիրութեան ինչպիսի երանգ կ՚ունենար, կեցութեան պարտադրանքով յաջորդում է «Հայ մամիկին աղօթքը»՝ «մեզ արժանի՛ ըրէ, Տէ՛ր, մեր խրճիթին աննշան» յորդոր-խնդրանքով.

Տո՛ւր որ, Աստուա՛ծ, ամէն սիրտ վառի իր սուրբ օճախէն,
Որ շմարի մոմի պէս կեանքի դաժան հովուն դէմ։
Տո՛ւր որ, ամէն ուռճացող մատղաշ հասակ իր կարգին
Զգայ յանկարծ ուսերուն բեռն իր անուշ երդիքին։
Ծնող մանուկն առջի հեղ տեսնէ տնական հայրական
Եւ ծերունին իր տան մէջ փակէ աչքերն յափտեան[5]։

Տան տեսիլի ամենահամեստ՝ խրճիթ-տնակ դրսեւորումներն են մեծ մամի աղօթքի հիմքում, որպէսզի ծնունդ-մահ երկրային կեանքի պտոյտն իր բնական-աստուածային պատուանդանն ունենայ։ Տառապանքից բանաստեղծի այլասիրութեան չափաբաժինն աւելանում է. նրա պօէտական զգացողութիւնները նոյնպէս հայ բանաստեղծութեան միքանիհազարամեայ մարդասիրութեան ծիրի մէջ են. մեծարենցեան «ըլլայի»-ների վեհացման հոգեշարժը պատել է նաեւ հայրենիք ու տուն չունեցող հերոսին։ Եթէ «Անտառին հիւղը» բանաստեղծութեան

[5] Մուշեղ Իշխան, *Ոսկի աշուն*, Բէյրութ, 1963, էջ 7։ Այս գրքից քաղուածքները շարադրանքում՝ այսպիսի յապաւումով՝ ՈԱ։

մէջ որբ հոգի — մենաւոր հիւղակ զուգահեռը յուսահատ անձնականութեան, տաղտուկ գորշութեան շեշտեր ունի, ապա «Հովիտին տնակը» իր խաղացկուն կենսուրախութեամբ յաղթահարում է «ես-ի ցուրտ առանձնարանի» կաշկանդումները.

Ես հին տնակն եմ հովիտին
Այգիներու ծփանին մէջ,
Իմ շուրջ հովեր կը թռչկոտին
Եւ զով ջուրեր կ՚երգեն անվերջ։

Գիշերն հեռուն՝ աստղ եմ կարմիր՝
Ճամփորդներուն համար անցնող
Եւ ցերեկն ալ՝ սիրալիր
Ծուխի երիզ մը ամպացող։

(ՈԱ, էջ 42)

«Անկայան, անբեւեռ» ընթացքը գոյութեան կերպի սնանկութիւնն է («Պապենական տունէս զատ...»), տունն ինքնութեան խարիսխն է, իսկ տան խարիսխը հայրենիքն է՝ հող հայրենին, այդպէս է գոյաւորւում երկրային կենաց ծառը.

Ծառերուն պէս, կեանքին պէս,
արմատներն իր մխրճած
Տաք սրտին մէջ մայր հողին՝
Կը կանգնի տուն ամբարձիկ՝
բանտելու լոյս ու երազ
Եւ տեսիլքներ երկնային...

(ՈԱ, էջ 9)

Հայրենի հողի վրայ նոր շինուող տան պատկերը մնալու է հեղինակի երազների միջուկը, որի պայծառութիւնը յաճախ մշուշելու է այրուող տան կրակի ծուխը՝ «Ես դեռ մանուկ՝ տեսայ հրդեհն հայ տուներուն», եւ այս երկու՝ երազի տուն — աւերուած տուն անհաշտ եզրերը կազմաւորելու են պատրանք-իրականութիւն հակադրամիասնութիւնը։ Մնձուրու ձեւակերպումով՝ «պատրանքը իրենց իրականութիւնն» էր, իսկ իրականութիւնն այլեւս իրենցը չէր։ Բանաստեղծական զուգահեռի մէջ յայտնւում է վրանը՝ ամրացման կէտ ու մշտական հանգրուան ունեցող

հայի բնօրրանային մշտակեցութեանը անյարիր կացարանը, բայց որը նոյնքան ցանկալի է ու անփոխարինելի գնչուի ցեղային կենսազգացողութիւններին։ Շքեղ պալատներում ապրող գնչուհու թափառիկ հոգին տառապում է իր տեսակի մշակոյթի կարօտից, եւ նա մի գիշեր թաքուն վերադառնում է իր այծեմազէ վրանը։ Իսկ հայ մարդու «Երազներու տունը» նոյն ընտանեկան յարկն է, որում սիրած կին եւ տուն կառոյցները նոյնանում են. կինը՝ որպէս տան պահապան ու արարիչ, նիւթի աշխարհի պատասխանատու ու ընտանիք համակարգի կենտրոնաձիգ ուժ.

Ախտոռանմի օրերէս վերջ ամայի՝
Քու սէրդ անհուն կարօտներով, յոյսով լի՝
Դարձաւ ինծի քաղցր տնակ մայրենի։

(ՈԱ, էջ 14)

Թւում է՝ նիւթական կառոյցին նուիրուած շարքի գեղագիտութիւնը պիտի սասանուէր պատկերների կոպտութիւնից, բայց Մուշեղ Իշխանի բանարուեստը քնարական կառոյց ստեղծելու դժուարութիւն չունի, ամենանուրբ բառահիւսքերով պատկերագրում են բանաստեղծի «Տան մը երազը», «Մայրիներու վիլլան», «Երջանկութիւն», «Տան սէր», «Իր տունը» եւ միւս բանաստեղծութիւնները։ Պինդ նիւթը ոգի է առնում նրանում ապրող, սէր ու ջերմութիւն արարող մարդկանցով, որ մի դէպքում կինն է, միւս դէպքում՝ մայրը, բայց առանց մարդաստեղծ այդ ուժի չի կայանում տուն ոգեղէն շինուածքը. աւելին՝ «տուն» եւ «մայր» բառերը հոմանշային արժէք են ստանում՝ «իմ տուն», «իմ մայր» բանաձեւումով։ Երեւակայութեան անպարփակ հոսքով կառուցւում է երազի տունը, որի շաղախը սէրն է ու կեցութեան ներդաշնակութիւնը.

Ներսը՝ մեր կեանքին, մեր հոգիներուն
Քերթուածն է քնքուշ անմահ մեղեդին,
Որ կը հնչէ միշտ խորհուրդին մէջ նոյն
Մեր սենեակներուն եւ պարզ սրահին։
Ոգեշունչ, սրտբաց, բեղուն լռութիւն…
Ամէն մտերմիկ իր ու կարասի
Հոն կը սարսռայ հպումէն ձեռքիդ
Եւ ամէն անկիւն կը պահէ գաղտնի
Արձագանգն անմար քու ձայնին վճիտ։

(ՈԱ, էջ 19)

Զուգադիպութիւն է, թէ՞ օրինաչափութիւն, որ կենսազգացողութիւնների նոյնութիւնը եւ ճակատագրերի նմանութիւնը, որ հայրենի տնից զրկուելն է, ծնում է բառ ու պատկերի, թեմայի ու գաղափարի ընդհանրութիւն, Վահէ Վահեանի «Արեւ-անձրեւ» ժողովածուն նոյնպէս ունի «Տնակն ամայի» խորագրով բանաստեղծութիւն, որ հայրենակարօտից մորմոքուող հոգու խորհրդանիշն է, իսկ «Ոսկի կամուրջ» ժողովածուն «Տան մը երազ» ձեւաբանական նուրբ տարբերութեամբ խորագիրը կրող բանաստեղծութիւն, որ դարձեալ տան տեսիլն է փայփայում։ Անդրանիկ Ծառուկեանի բանաձեւմամբ՝ «մանկութիւն չունեցող մարդիկ» իրենց հոգու հայրենիքն էին կերտում՝ խաղաղ մանկութեան երազանքը հոգիներում։ «Զորի տնակը» կազմուած է մեծարենցեան պատկերների քնքշութեամբ հիւսուած քառատողերից. անթերի հովուերգական պատկեր՝ գիւղական սիրուն տուն, ձագին լիզող կով, իրենց մանկութիւնը վայելող երկու մանչուկ.

Կովն ընտանի գուրգուրանքով կու տայ ձայն
Երկու փոքրիկ մանչուկներու սեւաչուի,
Որոնք բոպիկ ու կիսամերկ կը խաղան
Գետակին մէջ, իրար կողքին, ձեռք ձեռքի։

Դուրսը գուցէ ողջ քաղաքներ կաւերուին,
Հոս ձորի տան դռան առջեւ հովասուն,
Գետակին հետ, գետակին պէս խնդագին
Կը հոսին մեղմ երկու անուշ մանկութիւն։

(ՈԱ, էջ 23)

Զուգահեռի մէջ յայտնւում է նմանօրինակ մի պատկեր Մնձուրու գիւղանկարներից՝ թանապուր ուտող մանուկների խենթ խաղով, որ ընդհատուած է հակամարդուց ամենաբիրտ ձեւերով.

Իմ սովատանջ, արեւախա՛նձ մանկութիւն,
Ո՞ւր ինկար դուն, ախորի ո՞ր սեւ ճամբուն,
Եւ ի՞նչպէս շուտ դարձար մշուշ եւ ստուեր…
Մո՛ւթ է հոգիս… ոչի՛նչ, ոչի՛նչ չեմ յիշեր…

(ՈԱ, էջ 28)

Տարագրութեան կնքահայրերի գերագոյն նպատակը սա էր. ջնջել յիշողութիւնը, մոռացութեան թանձր ձիւթով պատել դէպի ինքնութիւն

տանող ուղին, լուծել հայի արիւնը անապատի աւազներում, տունդարձի ճամփան դարձնել երազ եւ նենգօրէն չարախնդալով՝ ծաղրել ցանկացած ազգային, վերանձնային երազանք։ Իսկ տարագիր հայ գրողի անսանձ միտքը գեղագրում է Աղէտի հետ առնչուող ամէն պատկեր, եւ արդիւնքում՝ ոչ միայն ինքն ու իր ազգն են տարագիր, այլեւ պատկերած տները՝ «տուներ տարագիր». չէ՞ որ սա միակ ազգն է, որի նախնական բառընկալումներում տունը հայրենիք ու պետութիւն է միաժամանակ՝ «Ջոջանց տուն» կամ «Սասնայ տուն», անգամ բանաստեղծական քառատող կառոյցը «տուն» անունն ունի, տուն, որտեղ բնակւում է բանաստեղծի հոգին։ Բառիմաստի նեղացումը գուցէ միայն արտաքին բառագործածութեան տիրոյթում է, բայց ոչ հայոց լեզուի աստուածային կառոյցում, որում ապրում է ամէն հայ, քանի դեռ խօսում է հայերէն.

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,
Ուր կը մտնէ ամէն հայ ինչպէս տանտէր հարազատ,
Կը ստանայ սէր ու սնունդ, սրտի հպարտ ցնծութիւն
Եւ բորեանէն ու բուրէն հոն կը մնայ միշտ ազատ։

(ՈԱ, էջ 11)

Մի ամբողջ տիեզերք պարփակող բանաձեւ է սա, արարչական միտքն ու լեզուն նոյնական են. ոչ թէ տեսակի հետ ծնուած, այլ տեսակ արարող, եւ մինչ Մ. Հայդեգերը կը սահմանէր փիլիսոփայական բարձրագոյն ճշմարտութիւնը՝ «Լեզուն կեցութեան տունն է», հայն արարուել էր լեզուական ատաղձով Հայի ոստանում, որն այսօր էլ պահպանել է անուան նախաստեղծ անխաթարութիւնը՝ Հայաստան, եւ Մուշեղ Իշխանի գեղարուեստական համակարգում ամենաամուր ու յաւէրժ կանգուն տունը անվերապահօրէն եւ տիեզերածնութեան օրէնքով «Հայ լեզուն է».

Հոն է միայն, որ կրնայ գտնել ամէն հայ կրկին
Խաժամուժին մէջ օտար կոռսնցուցած իր հոգին,
Անցեալն անհուն եւ ներկան, նոյնիսկ մթին ապագան…

(ՈԱ, էջ 11)

Տուն-լեզու ազգաստեղծ, ազգապահպան կառոյցը, որին միանում է Աստծու տաճարը՝ որպէս ոգու անձեռակերտ, խորունկ կենսաուժից

բաղադրուած հանգրուան՝ «Տաճար մը սուրբ կերտեցի բարձր ու հպարտ» (ՈԱ, էջ 25), Մուշեղ Իշխանի գեղարուեստական համակարգում անպայմանօրէն ամրացած է մայր հողին, եւ աճի խթանիչները միայն ազգային կենսամիջավայրում են, որ իրական Հայաստանն է՝ ազգային պետականութեամբ եւ բարձրացող մշակոյթով։ Բայց դարձեալ ոչ պատահականօրէն կամ զուգադիպութեամբ «Հայաստան» պօէմում յայտնւում են հարցադրումներ, որ հար եւ նման են Եղիշէ Չարենցի պօէմանման վէպի հարցադրումներին.

Ի՞նչ ես իրոք, ո՞ւր ես դուն,
Շրջուն ոգի՞, թէ՞ խորարմատ գոյութիւն,
Երգի կտո՞ր, հին հեթիա՞թ,
Իմ աչքերիս դէմ ծփացող վառ տեսի՞լք,
Տժգոյն պատկե՞ր կամ խնկաբո՞յր մագաղաթ,
Հանդերձեալի՞. թէ՞ այս կեանքին հայրենիք,
Նահատակաց փառքի պսա՞կ լուսաշող,
Գաղափարի կարմիր դրօ՞շ փողփողուն,
Ոսկի երա՞զ, թէ՞ գորշ հող.
Ի՞նչ ես իրոք, ո՞ւր ես դուն։

(ՈԱ, էջ 109)

Հայրենացաւից ծնուած ուղեղի մորմոքը, որ ազգային ամենայն ինչի հանդէպ կասկած է ծնում, սեփական պատմութեան եւ տեսակի զօրութեան հանդէպ խղճահարութիւն կամ մերժում առաջացնում, ինքնարարման անվերջ ընթացք ապրող գրողին չէր կարող յուսահատ անկարողութեան վիհը նետել։ Խլուած բնօրրանի ցաւը դառնացրել էր Չարենցին, բայց սէրը բոլոր ժամանակների Հայաստանների հանդէպ այնքան զօրեղ էր, որ պոռթկաց որպէս «Ես իմ անուշ Հայաստանի...»։ Չարենցին առհասարակ տրոհել հնարաւոր չէ. նրա ամբողջ ստեղծագործութիւնն է հայրենանուիրումի ու անձնազոհութեան յուշարձան։ Գեղամ Սեւանը նշում է, որ հասկանալի պատճառներով եղան որոշակի անվստահութեան եւ անհանդուժողականութեան դրսեւորումներ, բայց դրանք չէին կարող զարգացում ունենալ. «Հաւանաբար նման տարօրինակ եւ մշուշապատ մօտեցումը բանաստեղծի ազնիւ հոգու համար հեռու չէր ներքին խուլ զղջումներից, եւ դրա համար էլ որպէս բնաբան հեղինակը վերցրել ու ապաւինել էր... Աւետարանին. «Երանի որոց ոչ իցէ տեսեալ եւ

հաւատասցեն» (Յովհ. Ի. 29)[6]։ Մուշեղ Իշխանն ու իր անհայրենիք գրչընկերները, կորուսեալ հայրենիքի տեսիլը հոգիներում, իրենց լինելիութեան առարկայական յենարանը համարում էին իրական Հայաստանը, աւելին՝ «Հայաստան» պօէմում վերոբերեալ տողերին, այսինքն՝ ընկճող երկմտանքին յաջորդում են այսպիսի պատկերներ.

Գիտեմ, որ կաս՝ աւելի խոր, իրական,
Քան թէ երկինքն անվախճան,
Քան ձիւնն անբիծ՝ լեռներու սէգ կատարին,
Դաշտերուն մէջ ծաղկած հանդէսը գարնան,
Քան ջուրերու մեղեդին,
Քան մինչեւ իսկ կեանքիս սառած լուսնկան,
Որ ջերմ ու փայլ կը ստանայ
Քու մեծազօր արեգակէդ հեռակայ…

(ՈԱ, էջ 109)։

Բայց սա միայն նիւթական Հայաստանն է. հեղինակն առաւելագոյնս ճանաչում է նաեւ հոգեւոր ամբողջական Հայաստանը՝ իր մեծազօր մշակոյթով ու պատմութեամբ, իր փառաւոր անցեալով, եւ ամենաէականը՝ համատիեզերական կարգի մէջ աստուածային էութեան հանգրուանը, երկիր մոլորակի հոգեւոր առանցքը լինելու բարձրագոյն գիտակցութեամբ.

Գիտեմ, որ կաս եւ կը տեւես դարեդար.
Կէտ մը թէեւ աշխարհէն՝
Բայց սիրտն ես դու տիեզերքին համօրէն
Եւ ապրելու միակ իմաստը պայծառ։
Առանց քեզի կ՚առնէ կանգ
Երկիրն իր խօլ արշաւին մէջ ներդաշնակ,
Առանց քեզի կմարին
Աստղանշոյլ բոլոր ջահերն անհունին։

(ՈԱ, էջ 109)

Հայաստանը՝ որպէս հայ ինքնութեան յենման կէտ, անմահների երկիր կամ աստուածների բնակավայր, դառնում է Արարատի տիեզերահաղորդ կայանով՝ որպէս ազգային հոգեմտաւոր համակարգը

[6] Գ. Սեւան, *Սփիւռքահայ գրականութեան պատմութեան ուրուագծէր, Երեւան, 1980, էջ 305։*

լիցքաւորող կենսաուժի աղբիւր, անհորիզոն անսահմանութիւն, որի ստորոտում փռուած արեւի քաղաքից սրբազան լեզուի աստուածային յաճախականութիւնները սփռում են ամենուր ռադիօալիքների յորձանքով՝ «Երեւանն է խօսում»։

Հայաստանն է համայն հայութեան հայրենիքը։ Այս սահմանումն այլեւս անապացուցելի իրողութիւն էր Սփիւռքի այն հեղինակների համար, որոնք Մեծ եղեռնից յետոյ հաստատուեցին օտար երկրներում. այդ երկիրը նրանց բնակութեան վայրն էր, բայց ոչ հայրենիքն ու ծննդավայրը։ Սկսուել էր ուծացման ցաւագին ընթացքը՝ հիմնաւորապէս հաստատելով անհերքելի բանաձեւը՝ ինքնութեան պահպանման միակ տարածքը բնօրրան-հայրենիքն է։ Նոյն ժամանակի մէջ՝ 1940-ականների կէսերին, գրուեցին Անդրանիկ Ծառուկեանի «Թուղթ առ Երեւան» պօէմը, Վահէ Վահեանի «Տաղ առ Երեւան», «Երկրի կարօտ» բանաստեղծութիւնները, «Մատեան սիրոյ եւ մորմոքի» ժողովածուն՝ դարձեալ երեւանեան ձայնասփիւռից հոսող «Երեւանն է խօսում»-ի ելեւէջների հանդէպ վերանձնային կարօտով, Ժագ Յակոբեանի «Մեսրոպաշունչ» ժողովածուի բազմաթիւ բանաստեղծութիւններ եւ «հայ», «հող» արմատներից բաղադրուած խորագրով միւս ժողովածուները։ Համաստեղը՝ Հայաստանում փոքրիկ այգի ունենալու եւ այն մշակելու տեսիլը հոգում, հեռացաւ աշխարհից, իսկ Վահէ Վահեանի երազի տնակը Հրազդանի ափին էր։

Մուշեղ Իշխանի՝ տարբեր տարիներին գրուած բանաստեղծական շարքերում ազգային խնդիրներով գործերը տարբեր քանակ եւ բովանդակային խտութիւն ունեն։ «Կրակը» ժողովածուում սիրոյ այրումի թեման իշխողն է, բայց գեղագիտական հանգոյցը լիովին չի ազատուել հայրենացաւից. «Դո՛ւք, մամիկներ սեւազգեստ...», «Գետն օրերուս», «Կենդանի մահացում», «Կրակը» բանաստեղծութիւններում օտարութեանը չմերուող, հենման կէտը կորցրած հայի հոգու մորմոքն է՝ մեծ մամի երկրաստեղծ կերպարը աստուածացնող, արեւորդի պապերի պաշտամունքի կրակին ապաւինած։ Նախաստեղծ հուրը կրակի տարաշերտ ընկալումներից հիմնայինն է՝ հոգեստեղծ տարր, որ «ակութին մէջ օրերու» կը ջերմացնի որբ հոգու ցուրտ մենութիւնը։ Տարիների հետ գրւում են նոր բանաստեղծութիւններ, կազմւում են նոր շարքեր՝ «Տառապանք», «Արեւամար», համամարդկային թեմաներ են յայտնւում բանաստեղծութիւններում, եւ դարձեալ մէկընդմէջ պատկերի տեսքով հոսում է ինքնութեան միջուկը, որ ալեկոծւում է ուծացման, օտարման, ուրիշ

տեսակի հետ մերձեցումից ինքնութեան թանձրութիւնը կորցնելու տագնապներով՝ «Հօտ կորուսեալ», «Մինչեւ ո՞ւր», «Ինծի կը թուի», հարցադրումը բաց բնագրով է ներկայանում «Հողին վրայ ուրիշին» եւ «Հայ եմ ես» բանաստեղծութիւններում.

Ուրկէ՞ ուր եւ ինչպէ՞ս
Այս տան մէջ աշխարհին հեռակայ
Հայու շէն, մտերմիկ ընտանիք…
Օտար հարս, հայ փեսայ,
Օդին մէջ օտար երգ, օտար բառ.
Ալեհեր նան մը լոկ անբարբառ
Կը խնդայ ու կու լայ…

(Ե, էջ 204)

Արմատից կտրուած ծիրանի ծառը՝ որպէս օտար հողում չարմատակալող հայի խորհրդանիշ, դառնում է տարագիր հայի ինքնութեան նոյնականացման գեղարուեստական հնարք, բնաշխարհն ու նրա բնակիչը՝ նոյնական կենսաուժից սնուող աստուածային տեսակ։ Ինքնութեան բռնի օտարումը այդ ինքնութիւնն արարած բնական միջավայրից նշանակում էր հեռացնել տեսակը ստեղծող եւ սնուցող բնաշխարհիկ պայմաններից։ Յիշենք, որ Վ. Գրիգորեանի «Ժամանակի գետը» վէպում նոյն գաղափարը դարձեալ գեղագրւում է Ֆրանսիայում արմատաւորուած, ամէն գարնան ծաղկող, բայց այլեւս չպտղաբերող ծիրանի ծառի պատկերով։ Խորհրդանիշի մեկնութիւնը տարաշերտ է. մի կողմից անպտղութիւնը ընդվզում էր իրեն ծնող հողից բռնի օտարուելու համար, միւս դէպքում ծնունդ չտալը հետեւանքն էր նրա, որ կտրուել էր կենսաուժի հաղորդիչը, որ հայրենիք կամ բնօրրան է յորջորջւում։

Սփիւռքահայ տարբեր գաղութների գրողների ցուցակը անսահմանութեան է ձգտում. արդեօք կա՞յ մի ուրիշ այսքան բեղմնաւոր մշակութային ազգ՝ «ազնիւ սերմ» (Վահէ Վահեանի ձեւակերպումն է) ունեցող հայորդիների այսպիսի անվերջութեամբ։ Գրականագէտ Մուշեղ Իշխանի կերտած հայ գրողների դիմանկարներում, որոնք բոլորն էլ բարձր մտքի եւ գեղագիտութեան համադրութիւններ են, վերլուծական ամբողջական կառոյցով առանձնանում է Լեւոն Շանթի դիմանկարը։ Մարդախոյզ հոգեբանի նուրբ քննութեամբ հեղինակն իրապէս քանդակում է մեծ մտաւորականի բազմաբարդ կերպարը, արդիւնքում ամբողջանում

է ազգային մշակութաստեղծ ինքնութեան բացառիկ հարուստ էութիւնը։ Բնութագրումների հոգեբանական եւ իմացաբանական խորքային մեկնութիւնը, բառի ճշգրիտ գործածութեամբ ստեղծագործ անհատի հոգետեսակի տարաշերտութիւնը յայտնակերպող սուր հայեացքը մասնատում են Լեւոն Շանթ ոգի-հոգի-մարմին կառոյցը՝ էատարրերի ներդաշնակ գոյակցութիւնը ցուցադրելու նպատակով. «Շանթը իր ամբողջ ունեցածը կը պարտի մարդկային կոչումին հանդէպ սնուցած այն բարձր ըմբռնումին, որ վեր կը մնար սովորական չափանիշներէ։ Անոնք, որ մօտէն ծանօթ են իր կեանքին եւ բնաւորութեան գիծերուն, չեն կրնար չխոստովանիլ, թէ Շանթի գրական եւ կրթական բովանդակ գործունէութիւնը արտացոլումն է շարունակ ազնուացող եւ բիւրեղացող անհատականութեան մը, որուն բարեշրջումին ընթացքը պատմութիւնն է նոյն ատեն իր արտադրած գործերու զարգացման։

Իր հոգիին պէս Լեւոն Շանթի գրականութիւնն ալ յարատեւ վերելք մը եղաւ աւելի կատարեալին, աւելի վսեմին, աւելի ամբողջականին ձգտումով ու նուաճումով։

...Տրամադրութեանց մարդ չէր ինք, որքան ալ զգացումի ալիքներով փոթորկէր հոգին։ Կրցած էր տիրապետել ջիղերուն, անձին եւ կիրքերուն՝ զգացումը հաշտեցնելով մտքին հետ եւ ստեղծելով հոգեկան հաւասարակշռութեան սքանչելի օրինակ մը։ Իմաստասիրական, քաղաքական, գիտական եւ մանկավարժական իր բոլոր համոզումներուն մէջ կ՚առաջնորդուէր անշեղ սկզբունքներով, որոնք կը բխէին իր էութենէն, պատճառաբանուած խոկ եւ ապրում դարձող ներքին ըմբռնումի մը բովէն անցնելէ ետք։ Ոչինչ կ՚ընդունէր թելադրութեամբ եւ ոչինչ կ՚արտայայտէր պարագայական թեթեւամտութեամբ»[7]։ Սա՞ է կատարեալ մարդը, գերմարդը, Աստծու մարդը, որի միտքը տիեզերքն է գեղակերպում՝ ոգու եւ հոգու տարակերպ զուգորդումներով, գաղափարը իրացնում բառի բազմազան գործառոյթների շարակարգումով։ Եւ արդեօք այն, ինչ հոգեվերլուծաբանի խորաթափանցութեամբ գրել է Մուշեղ Իշխանը Լեւոն Շանթի մասին, իր տեսակի բազմերանգ պատկերը չէ՞, որ, ինքնութեան նիւթական խարիսխը կորցրած, միայն ազգային հոգեմտաւոր գանձարանի հարստութեան շնորհիւ իր եւ իր գաղութի, նաեւ համայն հայութեան ինքնապահպան խարիսխը դարձաւ իր գրով, իր բազմասպարէզ

[7] Մուշեղ Իշխան, *Երկեր, Երեւան,1990, էջ 345–347։*

գրական-մշակութային, գիտամանկավարժական գործունէութեամբ։ Մշակութաստեղծ հայի տեսակը, որ անհատն է եւ հաւաքականութիւնը մէկտեղ, եւ նրանք բոլորը՝ Դ. Վարուժանը, Ռ. Սեւակը, Սիամանթօն, Յովհ. Թումանեանը, Վ. Տէրեանը, Ե. Չարենցը, Հ. Օշականը, Կ. Չարեանը... եւ Մուշեղ Իշխանը, տարբերութիւններով հանդերձ, նոյն հայն են՝ անսահման ոգու եւ առաւելագոյն հոգու շաղախով կատարեալ էակներ, որոնց միայն սպանելով կարելի էր ոչնչացնել կամ ուծացնելով փոխել արեան կազմը, մնացած բոլոր դէպքերում նրանք անմահ են։

Պատմութիւն-ինքնութիւն-ներկայ շղթայի գեղարուեստափիլիսոփայութիւնը Մ. Իշխանի վերջին շրջանի գործերում աշխարհայեացքային կուռ համակարգ է ներկայացնում, որը նրա «Մեռնի՛լը որքան դժուար է», «Կիլիկիոյ արքան» թատերախաղերում դրսեւորւում է հայ ինքնութեան նախակերպարային (արքետիպային) շերտերի բացայայտմամբ։ Իր ազգի պատմութիւնն ու մշակոյթը եւ յատկապէս նրա ծագումնաբանութիւնը լաւագոյնս իւրացրած խորագիտակի աշխարհայեցողութեամբ յայտնակերպւում է հայի մտքի եւ արեան մէջ պտտուող նախնեաց սկզբնօրինակը՝ որպէս սեփական ինքնութիւնը աշխարհին ներկայացնելու միջոց։ Երկու թատերախաղերն էլ երգիծանքի թանձր քօղով պատել են Մուշեղ Իշխանի առաջադրած գաղափարը։

«Մեռնիլը որքա՛ն դժուար է» թատերախաղի երեւակայական դիպաշարը բացորոշում է ազգային հոգեմտաւոր կերտուածքի բարձրագոյն յատկութիւնները, որոնք նպատակադրուած կողոպտւում են աւելի թոյլ արարածներից՝ սեփական գենը հարստացնելու միտումով։ Հայոց ազգային էպոսն այդ ահազանգը հնչեցրել է հազարամեակներ առաջ. Սասնայ տան դիւցազունների սերմի թալանը դարձաւ նրանց, մեծ իմաստով՝ հայոց պետականութեան անկման պատճառ։ Մեր օրերում կողոպուտը շարունակւում է նորագոյն եղանակներով՝ հայի ուղեղը թուլամիտ ամերիկացուն պատուաստելու ձեւով։ Երգիծական խաղացկուն խօսքուզրոյցի մէջ բացւում է իրական պատկերը. հայի ուղեղը գողացած ամերիկացին սկսել է մտածել, գիտնական Արամեանից նրան փոխանցուել է տրամաբանելու եւ վերլուծելու աստուածային ձիրքը, գործարար ունակութիւնները, բայց եւ հայրենացաւը՝ Մեծ եղեռնը վերապրածների տառապանքի զգացողութիւնը, որն ամերիկացուն խանգարում է ապրել, իսկ թալանուած ուղեղով Արամեանը ո՛չ լիարժէք մեռած է, ո՛չ էլ ողջերի ցուցակում։ Ըստ էութեան՝ հեղինակի խորաթափանց

հայեացքը ամրագրում է հայոց պատմական երթի իրական պատկերը. աշխարհը գողանում է հայի գանձերը՝ հայրենիք, ուղեղ, սերմ, գեն, եւ նրան զրկում է նոյնիսկ երկնքի թագաւորութիւնում ապրելու հնարաւորութիւնից, մեռնելն անգամ դառնում է երազանք։ Ծիծաղի միջից հոսում են ցաւի արցունքները. «Կ՚ուզենայի վերջապէս շնորհքով մը մեռնել, կ՚ուզենայի՛ միայն եւ ամբողջապէս իմ անձս դառնալ, դադրէի երկինքին մէջ կէս-ողջ եւ երկրի վրայ կէս-մեռած ըլլալէ, դադրէի երկու մարդու մէջ մէկ անձ ըլլալէ. ես՝ Ճեյմս Արամեանս, դադրէի Ճոն Հելլըր ըլլալէ եւ վերադարձնէի մաքո՛ւր ինքնութիւնս» (Է, էջ 472)։ Իսկ այդ մաքուր ինքնութեան ազնուական սկիզբը, որ արքայի նախակերպարն է, հայի արեան կազմի մէջ է՝ ծննդաբանութեան ակունքում՝ «Մարդ թագաւոր կը ծնի եւ ոչ թէ կը դառնայ» (Է, էջ 478) սահմանումով։ Եւ որքան էլ միջավայրը չի ընկալում Լեւոնի մտքի եւ արեան հոսքի մէջ թափառող Կիլիկիոյ արքային՝ «Թագ չունիս, ծիրանի չունիս, սուր չունիս, ինչպէս թագաւոր կ՚ըլլաս» (Է, էջ 523), հեղինակն իր հերոսի երազանքի տէրն է՝ վերականգնուած տեսնել Կիլիկիոյ հայոց արքայապետութիւնը։ Եւ քանի որ թագից առաւել «կարեւորը թագաւորին գլուխն է», Մուշեղ Ճենտերեճեանն իրեն Իշխան կոչեց եւ այդպիսին կը մնայ յաւէրժ հայ մշակոյթի պատմութեան մէջ։

Այսպիսով՝ Մուշեղ Իշխանի գեղարուեստական համակարգում տունլեզու ազգաստեղծ–ազգապահպան կառոյցը ինքնութեան խարիսխն է, որի վրայ ամրանում է հայի հոգին, որից սնւում է ստեղծագործ միտքը։ Տունը՝ որպէս յենակէտային խորհրդանիշ, ներառում է այլաբանական իմաստների մի ամբողջ շարք, որի առանցքում բնօրրան-հայրենիքն է՝ գեղագրուած որպէս ինքնութեան աճի լաւագոյն կենսամիջավայր եւ ինքնութիւնը կազմաւորող լեզուական կառոյցի պատուանդան։

РЕЗЮМЕ

В художественной системе Мушега Ишхана этногенетическая и способствующая сохранению нации конструкция «дом-язык» является основой самобытности, которая связана, безусловно, с родной землей с ее стимуляторами роста в исключительно национальной биосфере. Таковой является Армения с ее национальной государственностью и развитием культуры.

Всепроникающий взгляд автора выявляет реальную картину исторической потупи армянства — мир грабит сокровища армян (родину, ум, семья, гены) и лишает его естественного права жить в своем отечестве.

В художественных произведениях Мушега Ишхана разных лет эти вопросы поднимаются с переменчивой интенсивностью, однако, тревоги о самобытности и образы прошлого постоянно проявляются посредством различных эстетических решений и составляют стержень его художественной лирики.

SUMMARY

In Mushegh Ishkhan's artistic system, the "home-language" nation-building structure is the basis of identity, which is definitely anchored in the motherland with growth stimulators in the exclusively national habitat, which is real Armenia with national statehood and cultural growth. The author's insightful gaze reveals the real picture of the Armenian historical procession — the world steals the Armenian treasures (homeland, mind, family, genes) and deprives it of the natural right to live in its own homeland. Mushegh Ishkhan's works on national issues in different years have different amounts of content; however, the anxieties of identity and images of the past by various aesthetic solutions are constantly manifested and form the ideological axis of his poetry.